

մանրներէն մին է՝ Կոմիտաս վարդապետէն ի վեր և անոր հետեւողութեամբ: Իսկ իրենց մայրը, արուեստագէտներ հասցնելու հաղուադէս ու թանկագին տաղանդն ունեցած է. ան իր կամօքով ու գորովովն ուզած է որ իր երեք զաւակներն ալ, այն օտար ու բարձր միջնակարգ դպրոցում իր ցեղին վրայ ճշող բռնակալ լուծը հայրենիքէն խլելով բերած նետած էր դանդաղ.

իրենց ցեղին պատիւ բերող արուեստագէտներ դառնան, և իր բարոյական էութեան բոլոր ուժերով գործակցած է անոնց կազմաւորման և լիովին յաջողած է իր կաթոգին մօր ու գաղափարապաշտ Հայուհի երազն իրականացնելու:

Ա. ԶՊԱՆԵԱՆ

Ա Ղ Օ Թ Ք

Սիսաբա հիմա՝ թողըքուած տընակ մըն է ամայի,
Շրջապատուած՝ ծառերով ու թուփերով գոսացած,
Լուսամուտներն այնքա՛ն նեղ, ու երդիքը այնքա՛ն ցած՝
Որ ճառագայթ մը հագիւ երբեմն ներս կը նայի:

Ներսն է հիմա ըստուերոտ, կարասիները՝ աստ անդ,
Ամէն անկիւն կայ բորբոս եւ ոստայններ մամուկի:
Տըրտմութիւն մը սեւաթեւ անոնց վըրայ կը պառկի.
Ձար ուրական մը կարծես ըրեր է զայն քարուքանդ...:

Դուռը միշտ փակ կը մընայ, ու նիգերն են ժանգոտա՛ծ.
Ներս չի սահիր յանկարծոյն՝ լոյսն անցորդի մը ժրպտին.
Ձո՛ւր, սեմերը փոշեպատ՝ կը ցեցոտին, կը փրտին,
Ըսպատելով անծկագին՝ այցելուի մը գրեթէ:



Երբեմն շէն էր ան ալ, թէեւ համեստ ու աղքատ.
Գիշերն ա՛յ քառուղ ալ կ'իջնէր երանութիւնը լուսնին,
Ու ծիծաղը կը ծաղկէր, աստղերու պէս լուսածին,
Կամ մեխակը օրհնածիր՝ համբոյրներու անարատ:

Անաղմուկ էր ան դարձեալ. յասմիկներու մէջ բոբեան
Նաթոտ կապած մեկուսի, Բընակիւնները անոր
Պա՛րզ էին միշտ, սակայն գոհ ու երջանիկ ամէն օր,
Իր թաղարովը հարուստ՝ մանիշակի մը նըման:

Իր որմերէն ներս ճերմակ, երբեմն ըստուեր մը բարի
 Ժըպիտներուն կը բերէր կախարդութիւնը անհուն.
 Տընակն ամբողջ կը ցընծար անոր ամէն մըտնելուն,
 Եւ երբ մեկնէր, ըսպաման կ'ըլլար վայրկեանը տարի:



Ձինքն ընդգոգող թուփերը, ո՛վ Տէր, կըրկին թող ծաղկին,
 Լուսամտաները բացուին, բորբոսները անհետին,
 Կեանքը դարձեալ ըսկըսի վարագոյրի մը ետին,
 Եւ ժըպիտները թառին թող իրենց տեղը նախկին:

Ձեռք մը ամէն իրիկուն, թող զըթուլեամբ մ'անսահման,
 Դողըղդացող մոմ մը գէթ բերէ դընէ սեղանին,
 Ներսը լոյսով թող հըրճուի, թող ըստուերներն օրօրուն,
 Ու մանկօրէն սըրտարաց՝ սիրեն, պաշտեն, օրհնեն՝ զայն:

Թող հին պարիկը բարի՝ հըրաշքով մը երեւի,
 Ձեւին, ծային, նայուածքին հըմալքն անգին տարածէ,
 Ու երգին տակ այս լըբուած՝ հին սէրն, հին խանդն արծարծէ,
 Որ այցողներն ընդունին համբոյր՝ փոխան բարեւի:



Ա՛խ, սիրտս հիմայ՝ թողլըբուած տընակ մըն է ամայի,
 Ծըրջապատուած՝ ծառերով ու թուփերով զօսացած,
 Լուսամտաներն այնքա՛ն նեղ, ու երգիքը այնքա՛ն ցած,
 Որ հառաքայթ մը հազիւ երբեմըն ներս կը նայի:

Պէյրուք

ՍԱՐԳԻՍ ՄԵՀԵԱՆ